Բիւզանդացի պատմիչները հաղորդում են, որ ճիշդ այս ժամանակները Բաբակի հետեւորդ ոմն պարսիկ ազնուական, Թէոփոբ անուամբ, անցնում է բիւզանդական հողը, տանելով հետը 14 հազար փախստական աղանդաւոր:

Առասպելախառն զրոյցները բաւականին խաւարել են Թէոփոբի պատմական դէմքը: Անհաւանական է, որ Մուռամեան համայնքը փախուստ տար արեւմուտք այնպիսի ժամանակ, երբ նրանց առաջնորդ Բաբակը փայլում էր իր յաղթութիւններով:

Փախստականները գետեղւում են Սինոպի մօտ, ուրեմն, Արմենեակ զինուորական թեմում եւ մի քանի տարուց յետոյ նրանք կայսր են հրաւիրում Թէոփոբին: Սա որպէս թէ արդէն պատրկութեան պատիւ էր ստացել եւ կընութեան առել Թէոդորա կայսրուհու քոյրը, ըստ այլոց նրա տալը, Թէոփիլ կայսեր քոյրը: Թէոդորան հայուհի էր եւ հռչակաւոր Սամուէլ Մամիկոնեանի եղբօր դուստրը:

Ինչ կասկածներ եւ յարուցուին Թէոփոբի անձի մասին, նրանց մէջ յետին տեղը չպիտի բռնէ այն ենթադրութիւնը, որ նա եւ իր հետ փախչողները աւելի հայեր են, քրիստոնեայ համայնք, որ ապաստան էին որոնել իրենց հաւատակիցների մօտ: Թէոփոբի խնամութիւնը հայ ընտանիքի հետ եւս բնորոշ է հայի համար եւ սովորական երեւոյթ Բիւզանդիայում, մինչդեռ աննախընթաց մի պարսիկի նկատմամբ: Մուռամեանների փախուստը կարող էր տեղի ունենալ միայն Բաբակի անկումից յետոյ, ուրեմն ուշ քան 837 տարին:

Ինչ եւ իցէ: Թէոփիլ կայսրը դահ բարձրանալով յարմար դատեց օգտուել Մուռամեան շարժումից եւ հարուածել արաբներին: Կայսերական զօրքերը արդէն պատրաստ էին տօնել իրենց յաջողութիւնը Եփրատի ափերին եւ մանաւանդ Կիլիկիա, երբ ձախողեցան: Կայսրը ստիպուած էր հաշտութիւն առաջարկել: Ամիրապետ Մամուն մերժեց: Նրա հսկայական նաւատորմը շարժուել էր արդէն ուղիղ դէպի մայրաքաղաք, երբ վերահաս մահը՝ 833 թուին, վերջ դրեց խիզախ ձեռնարկին:

Ըստ հայ տեղեկութեան (Մովս. Կաղանկ. Գ. 70) Մանուելի արշաւը տեղի ունեցաւ հ. թ. 280, ուրեմն 831–832 թուին, հաւանօրէն 832-ի դարնան: Խալիֆը մեռաւ 833-ի ամառը:

Մամունի յաջորդ՝ Մուտասիմ բարուք համարեց նախ երկիրը խաղաղեցնել ներքին յուզումներից, որոնց աղբիւրը խռովարար Բաբակն էր:

Հայաստանի կուսակալը այդ ժամանակ ոմն Բաղոզի էր (եւ ոչ Բաղոզի, ինչպէս ասուած է, Մովս. Կաղ. Գ. 20), ամիր Մումին կոչուած: Սա արաբական մատենագիրների՝ Հասան իբն Ալի ալ Բաղտիսի ալ Մամունի էր, որ ծանօթ է նաեւ Ասողիկին Մամունիկ անունով՝ Յովհաննէս Ովայեցի կաթողիկոսի ժամանակ:

Նոր Խալիֆը նրա տեղ ղրկեց Հայաստան աւելի վճռական մարդ՝ Ափշին անունով (Վարդան, 79): Ափշին հասնելով Ատրպատական յարձակուեց Բաբակի վրայ եւ ջարդեց նրա բանակը: Թերեւս կարծելով որ Աղուանից իշխանները Բաբակի դաշնակիցն էին, նրանց դէմ ղրկեց Մուհամմեդ իբն Սալիման ալ Ազդի, յանձնելով նրան երկրի կառավարութիւնը:

Աղուանից պատմագիրը հաղորդում է, որ հ. թ. 286 = 837 թ. Բաղդադից եկաւ Աղուանքի վրայ 12 հազարանոց հեծեալ զունդ: Սահլ Սմբատեան, «որ յարքայից Զառմիհրական տոհմէն էր, դիմէ ի վերայ որպէս արծուի խոյացեալ ի տկար թռչունս», եւ ցրում է թշնամու զօրքերը: Այս գնդի առաջնորդն էր, երեւի, յիշեալ Մուհամմեդ ալ Ազդի:

Պարտուած Բաբակը փորձում է ապաստանել Սահլի մօտ: Սակայն, Սահլ յանկարծ փոխում է իր քաղաքականութիւն ի նպաստ Ափշինի եւ Բաբակին բռնում յանձնում է արաբ զօրավարին նոյն 286=837 թուին: Սահլ որպէս թէ «առնու իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց եւ Աղուանից տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար»:

Կաղանկատուացու հրատարակութեանց մէջ պակասում է այս ամբողջ հատուածը, որ տալիս է Էջմիածնի թ. 633 ձեռագիրը, եւ որի յայտնութիւնը պարտական ենք Դաղեանին, («Արարատ», 1896): Դժբախտաբար, հատուածի վերջը թերի է, ուր յիշւում են «տիրանց տէրն Յովհաննէս, որ հայոց Աղուանից եւ վրաց եղեւ տէր» եւ Բուլիսար Խոյտա փափդոս,